Ռադիոհաղորդում

Սփյուռքի համար

ԳԱՌՆԻԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԸ

Հուշարձաններն իրենց ստեղծող ժողովրդի հոգևոր մշակույթի իրական անձնագրերն են: Հայ ժողովուրդը հարուստ է բարձր կարգի հուշարձաններով, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի Գառնիի հեթանոսական տաճարը:

Կառուցված լինելով մեր թվագրության առաջին դարի 70-ական թվականներին, կանգուն գոյատևելով շուրջ 1600 տարի, կործանվել է 1679 թվականի ուժեղ երկրաշարժով, ապա, նրա բեկորները երեք դար մնացել են պառկած, մեծ մասով ծածկված թանձր հողաշերտով:

1834 թվականին ֆրանսիացի անվանի գիտնական Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերեն այցելելով Գառնի, այդ ժամանակ հողի երեսին երևացող բեկորների և այլ մասերի տվյալներով ստեղծում է տաճարի վերակազմության առաջին նախագիծը: 78 տարի անց՝ 1912 թվականին Նիկոլայ Մառի արշավախմբի ճարտարապետ Կ. Ռոմանովը ստեղծում է տաճարի երկրորդ վերակազմությունը: Այնուհետև, 31 տարի անց՝ 1933 թվականին մեր հայրենակից Նիկողայոս Բունիաթյանը հանգամանորեն ուսումնասիրում, չափագրում և ստեղծում է Գառնի տաճարի երրորդ, մասնագիտորեն շատ արժեքավոր վերակազմությունը. նա էլ որոշակի աշխատանք է տանում հուշարձանը վերականգնելու ուղղությամբ, սակայն կարճ ժամանակ անց այդ աշխատանքները դադարեցվում են:

Տարիներ անց, ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի ղեկավարությամբ Գառնիում վերսկսվում են հնագիտական պեղումները. այդ ժամանակ էլ արշավախմբի ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանը ստեղծում է հուշարձանի նոր վերակազմությունը, մշակում վերականգնման գծագրեր:

Հայկական ՍՍՀ կառավարության 1968 թվի որոշմամբ 1969 թվականին սկսվում և 1975 թվականին ավարտվում են Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման աշխատանքները ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանի անմիջական ղեկավարությամբ:

Այժմ մեր աչքերի առջև՝ Գառնիի գեղատեսիլ, հոյակապ բնության գրկում վեր է հառնում գողտրիկ, շատ արժեքավոր մի հուշարձան, այնպես, ինչպես 1910 տարի առաջ հայկական կապտավուն որձաքարերով կերտել էին մեր մեծ վարպետները:

Այդ հեռու ժամանակներում աշխարհը նվաճող հռոմեական զորքերը զորավար Կորբուլոնի առաջնորդությամբ կոտրելով մեր քաջարի զորքի ու ժողովրդի համառ դիմադրությունը, գրավում, հրդեհում, կործանում են մեր շքեղակերտ մայրաքաղաք Արտաշատը:

Երբ Հռոմի և Հայոց տերերը խաղաղության դաշն են կնքում միմյանց միջև, Հայոց թագավոր Տրդատը հրավիրվում է Հռոմ թագ ստանալու: Հռոմը մեծ շուքով դիմավորում է Տրդատին ու իր շքախումբը, իսկ կայսրության տեր Ներոնը մեր թվականության առաջին դարի 66 թվականին ադամանդակուռ թագը հանձնելով Տրդատին, նրա հետ Հայաստան է ուղարկում վարպետներ: Այս վերջիններս գործակցելով հայ արվեստակիցների հետ, վերականգնում են Արտաշատը ու նաև կերտում են Գառնիի անձեռակերտը, ի հատուցումն կործանած Արտաշատի և ի նշանավորումն ստեղծվող բարեկամության:

Գառնին, որ հունա-հռոմեական ոճի կերտվածք է, իր մանրամասներում ունի հայ արվեստի որոշակի դրոշմը: Եվ ընդհանրապես նման մի հուշարձանի մեր հողի վրա ստեղծվելու համար, անկասկած, կային որոշակի նախապայմաններ: Չէ որ այդ ժամանակների Հայասատանը հելլենական արվեստի ստեղծման և տարածման երկրներից մեկն էր: Այստեղ շինարարական արվեստը ուներ որոշակի մակարդակ, ի վիճակի իրականացնելու նաև բարդ կառուցվածքներ:

Շատ հատկանշական է, որ հայ ազգային ճարտարապետությունը իր կազմավորման խանձարուրում անգամ չփորձեց կրկնել իր նախորդի՝ Գառնիի ոճը. նա ստեղծեց էությամբ ու ձևով նորը, որ միայն իրենն է, չխորշելով, ինչ խոսք, որոշ մանրամասներ փոխառնել նրանից: Այս երևույթը հաստատող ամենալավ օրինակը Գառնիի հեթանոսական տաճարի անմիջական հարևանությամբ դեռևս յոթերորդ դարի կեսերին զուտ հայկական ձևի՝ բոլորակի մեջ առնված քառախորան տաճարի կառուցումն է:

Գառնիի ամրոցը պատմիչների տեղեկություններով հազարամյակների հնություն ուներ: Մասամբ պահպանված պարիսպները կառուցվել են մեր թվագրությունից հարյուրամյակներ առաջ: Եվ ահա այդ բերդապատերով ամրացված տարածքում հեթանոսական տաճարից բացի, կային նաև քաղաքացիական շինություններ, այդ թվում պալատական շենքեր, բաղնիք և ապրելու համար այլ անհրաժեշտ հարմարություններ, որոնք թերևս բացվեն հետագայում՝ նոր պեղումներով:

Արարատյան դաշտում գտնվող հայոց թագավորանիստ քաղաքներից երկրի տերերը ամառային շոգ եղանակին իրենց ժամանակն ապահովաբար անց էին կացնում Գառնիի իրենց ամառանոցում:

Այժմ Գառնին դարձել է մեր հանրապետության ամենացանկալի տեսարժան վայրերից մեկը: Այդտեղ միշտ մարդաշատ է, խոսակցության մեջ լսվում են բազմաթիվ լեզուներ՝ դրանք զբոսաշրջիկներ են աշխարհի շատ երկրներից: Այդտեղ կազմակերպվում են երգի տոներ, թատերական ներկայացումներ, ժողովրդական ստեղծագործության ցուցադրումներ:

Դրական պիտի համարել այն, որ պատմական Գառնի գյուղը զգալապես բարեկարգված է 1950-ական թվականներին մշակված գլխավոր հատակագծի հիման վրա (հեղինակ ճարտարապետ Տիրան Մարության): Ցանկալի պիտի համարել, որ գյուղի գլխավոր մուտքից ուղղակի հուշարձան տանող ճանապարհը

լիակատարությամբ իրագործվի, որ այնտեղ գնան առանց միջանկյալ ճանապարհներ անցնելու:

Զարմանալի է, որ մեր օրերում որոշ արվեստագետներ բացասաբար են վերաբերվում Գառնիի վերականգնմանը, ասելով, թե ավերակ վիճակում այն ավելի հետաքրքիր էր, քանդակները, բեկորները ավելի խոշոր կառուցվածք էին բնորոշում և այլն: Բանն այն է, որ ճարտարապետական գործը գնահատելի է իր կանգուն վիճակում միայն, երբ ճշմարտապատում են նրա մասշտաբը, թողած տպավորությունը, ներդաշնակությունը բնության հետ. չէ որ սկզբնապես կառուցվածքը հենց այդպիսին է եղել, և ոչ ավերված, ընկած գետնատարած:

Գառնիի վերականգնումն ընդհանուր առմամբ երջանիկ բացառություններից է: Ես, որ որպես զբոսաշրջիկ եղել եմ Իտալիայում, Հունաստանում և այլուր, նկատել եմ, որ հնագույն հուշարձանները պարզապես ամրացված են. լիակատարությամբ վերականգնված հուշարձաններ չէին հանդիպում: Այժմ, սակայն, նման գործեր ձեռնարկում են. օրինակ, սկսվել են աշխատանքներ Հունաստանի ամենանշանավոր հուշարձանի՝ Պարթենոնի վերականգնման ուղղությամբ: Բնության հողմահարմանը ավելի լավ են դիմագրավում կանգուն կառուցվածքները, մինչ ավերակ վիճակում գտնվողները մեծ արագությամբ քայքայվում են, բեկորները փչացվում:

Գառնիի վերականգնման օրինակը համոզում է, որ վերականգնման արժանի հուշարձաններին երկրորդ կյանք պարգևելը շնորհակալ գործ է, արժանի ամենայն խրախուսանքի: Թվում է, թե մեր ազգային ճարտարապետության փառքերից մեկի՝ Զվարթնոցի լիակատար վերականգնումը պատվաբեր կլիներ մեր ժամանակին և մեր սերնդին: